ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Սիսիան **03/11/2023**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 13 անդամներ:

Բացակա էին՝ Աշոտ Աղաջանյանը, Ավագ Ասատրյանը, Աննա Ավետիսյանը, Անիկ Գրիգորյանը, Գեվորգ Դավթյանը, Դավիթ Դավթյանը, Հայկ Հակոբյանը, Ջիվան Մարգարյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝

Գարիկ Հակոբյանը, Դավիթ Այվազյանը, Դավիթ Հարությունյանը, Կորյուն Մուրադյանը, Նարա Հովհաննիսյանը, Վեյնամին Թանգյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Հակոբջանյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կարեն Իվանյանը

Ավագանու նիստն իրավազոր էր և հայտարարվեց նիստը բացված:

Նիստը ուղիղ հեռարձակվում էր:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի 2023 թվականի նոյեմբերի 3-ի հերթական նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 19-ի թիվ 21-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում լրացումներ կատարելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականության 2022 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու և համայնքի վարչական սահմաններում գտնվող

արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 18(Ն) որոշման մեջ լրացում կատարելու մասին:
6. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից շահագործական հետախուզում կատարելու համար «ԳԵՈ ՍԵՐՎԵՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սահմանափակ օգտվելու իրավունք /սերվիտուտ/ տրամադրելու մասին:
7. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 67-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի ԹԻՎ 21-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 83-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով ու «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 21-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1. Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «եկամուտների գծով՝ 2179329.8 հազար դրամ» բառերը փոխարինել «եկամուտների գծով՝ 2191414.8 հազար դրամ» բառերով:
2. Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ծախսերի գծով՝ 2981154.3 հազար դրամ» բառերը փոխարինել «ծախսերի գծով՝ 2993239.3 հազար դրամ» բառերով:
3. Որոշման 3-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ հատվածներում կատարել փոփոխություններ և լրացում՝ համաձայն 1, 2 և 3 հավելվածների:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ Դավիթ Այվազյանը ներկայացրեց բյուջեում կատարվող փոփոխությունները և առաջարկեց վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից 1359000 /մեկ միլիոն երեք հարյուր հիսունինը հազար/ ՀՀ դրամ տեղափոխել 06.4.1 ծրագիր 4241 հոդված, որից՝

1. 1105000 /մեկ միլիոն հարյուր հինգ գազար/ ՀՀ դրամ հատկացնել Սիսիան համայնքի Սպանդարյան բնակավայրի վարչական շենքին եռաֆազ սնուցման կետ ավելացնելու համար.
2. 234000 /երկու հարյուր երեսունչորս հազար/ ՀՀ դրամ հատկացնել Բռնակոթ բնակավայրի Անդրանիկ Գրիգորյանի փողոցում նոր էլեկտրական սնուցման կետ ավելացնելու համար.
3. 20000 /քսան հազար/ ՀՀ դրամ՝ Շենաթաղ բնակավայրի դպրոցի շենքի տանիքին տեղադրված արևային կայանը ցանցին միացնելու համար.

493048 /չորս հարյուր իննսուներեք հազար քառասունութ/ ՀՀ դրամ տեղափոխել 09.1.1 ծրագիր 5113 հոդված՝ որպես Սիսիան համայնքի և Ա/Ձ Արսեն Գրիգորյանի միջև կնքված պայմանագրի

շրջանակներում Շենաթաղ բնակավայրի ՆՈՒՀ խմբասենյակի վերանորոգման աշխատանքների 5% տրամադրման համար:
Առաջարկվում է նաև ֆոնդային բյուջեից 987700 /ինը հարյուր ութսունյոթ հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ հատկացնել Սիսիանի համայնքապետարանի վարչական շենքի նկուղի լրացուցիչ վերանորոգման աշխատանքների համար:
Գորայք բնակավայրի փողոցային լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների համար, պետության մասնաբաժին վճարելու նպատակով, ֆոնդային բյուջեի /Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) մասում ավելացնել 12085036 /տասներկու միլիոն ութսունհինգ հազար երեսունվեց/ ՀՀ դրամ:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 68-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով ու նկատի ունենալով Սիսիան համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 28-ի թիվ 281-Ա որոշումը.

1. Սիսիան համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարել լրացումներ և գույքացանկ ներառել 115562775 /մեկ հարյուր տասնհինգ միլիոն հինգ հարյուր վաթսուներկու հազար յոթ հարյուր յոթանասունհինգ/ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով գույքը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Դ. Այվազյանը ներկայացրեց, որ 2021-2022թթ. նվիրատվությամբ ստացված գույքը՝

1) «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ՍՊԸ-ի կողմից 60 հատ 1100լ տարողությամբ պոլիէթիլենե աղբամանները,
2) ՀՀ Սյունիքի մարզի զարգացման և ներդրման հիմնադրամի կողմից 10 հատ 1100լ տարողությամբ պլաստմասե աղբամանները,
3) «Տուրիզմի Հայկական ֆեդերացիա» ՀԿ-ի կողմից 9 հատ 1100լ տարողությամբ պլաստմասե աղբամանները,
4) ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից 2 հատ բարձրախոսներ,
5) ՄԱԶԾ-ի կողմից 1 հատ ՈՒԱԶ մեքենա՝ իր սարքավորումներով,
6) ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից առաջին օգնության ապրանքներ.

անհրաժեշտ է ներառել գույքագրման փաստաթղթերում, որից հետո կտրամադրվի կազմակերպություններին:
Արմեն Հակոբջանյանը լրացրեց, որ մեքենան կտրամադրվի բժշկական կենտրոնին: Ունենք մեկ վարորդի հաստիք, որը հիմնականում կծառայի բնակավայրեր այցելելու համար՝ ըստ կազմած երթուղու:
Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 69-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 32-րդ կետով և 77-րդ հոդվածի 3-րդ մասով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականության 2022 թվականի գույքագրման փաստաթղթերը համաձայն 1-ից 4 հավելվածների՝

1) հիմնական միջոցներ - 4497728558 /չորս միլիարդ չորս հարյուր իննսունյոթ միլիոն յոթ հարյուր քսանութ հազար հինգ հարյուր հիսունութ/ ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով,
2) շրջանառու միջոցներ - 42926299 /քառասուներկու միլիոն ինը հարյուր քսանվեց հազար երկու հարյուր իննսունինը/ ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով,
3) հիմնական միջոցների մաշվածք - 1912615184 /մեկ միլիարդ ինը հարյուր տասներկու միլիոն վեց հարյուր տասնհինգ հազար մեկ հարյուր ութսունչորս/ ՀՀ դրամ արժեքով,
4) հիմնական միջոցների մնացորդային արժեք - 2585113374 /երկու միլիարդ հինգ հարյուր ութսունհինգ միլիոն մեկ հարյուր տասներեք հազար երեք հարյուր յոթանասունչորս/ ՀՀ դրամ արժեքով:

Դ. Այվազյանը զեկուցեց, որ համայնքային սեփականության գույքագրման աշխատանքների կազմակերպման համար ստեղծվել է գույքագրման հանձնաժողով, որը հաստատել է համեմատական տեղեկագրերը: Ներառվել է նաև նախկին Գորայք համայնքը, որտեղ կատարվել է վերագնահատում:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 70-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԵՅՆԱՄԻՆ ԹԱՆԳՅԱՆ /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 143–րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 17-ի N2/փ-358 դրական եզրակացությունն ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի գլխավոր հատակագծում կատարել փոփոխություն և Սիսիան քաղաքի Իսրայելյան փողոցի թիվ 63/3 հասցեում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների կատեգորիայի գործառնական նշանակության հողերից

0.02598հա հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-006-0106-0063, վկ. թիվ 19072023-09-0045) փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության հողերի կատեգորիա «բնակելի կառուցապատման հողեր» գործառնական նշանակությամբ:

2. Աշխատակազմի քարտուղարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Վեյնամին Թանգյանը զեկուցեց, որ անհրաժեշտ է Սիսիան քաղաքի գլխավոր հատակագծում կատարել փոփոխություն, հողամասի նպատակային նշանակությունը փոխելու համար: Իսրայելյան փողոցի վրա գտնվող շինությունը, որը պատկանում է Նարեկ Մելիք Թանգյանին, մարզպետարանը այդ շենքը պետք է գնի և նվիրատվություն կատարվի տվյալ շենքի բնակիչներին:
Համայնքի ղեկավարը ավելացրեց, որ յոթ ընտանիք կունենա իր սեփական բնակարանը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 71-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 18(Ն) ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԵՅՆԱՄԻՆ ԹԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով ու «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի վարչական տարածքում աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման կարգը հաստատելու մասին» թիվ 18(Ն) որոշման մեջ կատարել լրացում և որոշման 3-րդ հավելվածի կարգի վերջին պարբերության «բ» ենթակետի «Բնունիս» բառից հետո լրացնել «Գորայք, Ծղուկ, Սառնակունք, Սպանդարյան» բառերը:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Որոշման մեջ լրացում կայացնելու նպատակն է, որ այս չորս բնակավայրերում էլ՝ Գորայք, Ծղուկ, Սառնակունք, Սպանդարյան կատարվի աղբահանություն:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 72-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ ՇԱՀԱԳՈՐԾԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒՋՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ «ԳԵՈ ՍԵՐՎԵՅ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ /ՍԵՐՎԻՏՈՒՏ/ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԵՅՆԱՄԻՆ ԹԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 50-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N286 որոշման կարգը, Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից 2022 թվականի հունիսի 1-ին տրված «Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության» թիվ ԵՀԹ-29/344 թույլտվությունը և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունն ու «ԳԵՈ ՍԵՐՎԵՅ» ՍՊԸ-ի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի գրությունը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շենաթաղ բնակավայրի սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության հողերից «ԳԵՈ ՍԵՐՎԵՅ» ՍՊԸ-ին շահագործական հետախուզում կատարելու համար, 1 տարի 3 ամիս ժամկետով, տրամադրել 311.31125հա հողամասերից սահմանափակ օգտվելու իրավունք /սերվիտուտ/, մեկ հեկտարը 30000 ՀՀ դրամ տարեկան վճարով, որից՝
   1) 30.03241հա գյուղատնտեսական այլ հողատեսք /վկ. 05092022-09-0015, ծածկագիր՝ 09-071-0160-0019/,
   2) 281.27884հա գյուղատնտեսական այլ հողատեսք /վկ. 12122022-09-0039, ծածկագիր՝ 09-071-0173-0004/:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 73-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ԻՎԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2023 թվականի դեկտեմբերի 1-ին, ժամը 16:00-ին:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 74-Ա/

Ավագանու անդամներ

ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՐԱՉՅԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԲԵԼԼԱ ԹԱՄՐԱԶՈՎԱ

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՆԱԽՇՈՒՆ ՅԱԶՈՒԼՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Կարեն Իվանյանը _____